

Տարեկան գինը 10 ռուբլի է տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:

(Ստորագրողները կրկնապես խմբագրատան մեջ:

(Ստորագրողները կրկնապես խմբագրատան մեջ:
Tudjancs. Redakcia „Munkacs“

ՄԵՆԿ

Խմբագրատանը բաց է առաջատան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից)

(Տպարարությունը ընդունվում է ամեն լեզուով:

(Տպարարությունների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի խորհուրդ. — Ներքին տեսություն:
Նամակ Նոր-Նախիջևանի: Նամակ խմբագրին:
Ներքին լուրեր: Արտաքին տեսություն:
Եւրոպայի դրութիւնը: «Մշակի» հեռագրիւններ:
Ֆայտարարութիւններ: Բանասիրական: Խնն-
քը:

ՄԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Մեր խմբագրութեան միջոցով
ուղարկվեցաւ երկու շաբաթվայ
ընթացքում 3200 ռուբլ յոգուտ
Վանի սովատանջների, «Փորձի»
խմբագրութեան միջոցով 2000
ռուբլուց աւելի, եթէ հաշւենք որ
ուրիշ ձեռքերով էլ մօտ մի 1000
ռուբլ ուղարկվեցաւ, ամբողջ գու-
մարը կանի մօտ 6000 ռուբլ, որ
ուղարկվեցաւ սովատանջների հա-
մար հիմնված Վ. Պօլսի և Վ. Լա-
նի մասնաժողովներին:

Ի հարկէ այդ գումարը շատ մեծ
գումար է, բայց այնու ամենայ-
նիւ դա լաւ է քան ոչինչ: Ու-
ղարկված փողերը կարող են բո-
ւական օգնութիւն հասցնել Հա-

յաստանի սովամահ ժողովուրդին:
Լսում ենք որ թիֆլիսի տիկին-
ներն էլ սկսեցին փողեր հաւա-
քել նոյն նպատակով:

Յոյս կայ ուրեմն որ բացի ար-
դէն ուղարկված փողերից, դար-
ձեալ գումարներ կը հաւաքվեն
յոգուտ Հայաստանի սովատանջ-
ների:

Բայց մենք կուզենայինք մի
բանի վրա Վ. Պօլսի և Վ. Լանի
մասնաժողովների ուղարկութիւնը
դարձնել և մի կարեւոր խորհուրդ-
տալ այդ մարդասիրական ընկե-
րութիւններին:

Թո՛ղ Ռուսաստանից ստացած
գրամները և այն գրամները, որոնք
նոյն նպատակով Վ. Պօլսում և
Թիւրքիայի ուրիշ տեղերում հա-
ւաքվեցան, և որոնց քանակու-
թիւնը մեզ յայտնի չէ, գործ դըր-
վեն հայ սովատանջ ժողովուրդի ան-
միջական պէտքերին լրում տալու
համար, թո՛ղ այդ փողերով շու-
տով հաց և ալիւր առնվի և բա-
ժանվի Հայաստանի խեղճ ժողո-

ւորի մէջ, բայց չը պէտք է մո-
ռանալ որ դորանով գործը չէ
կարող վերջացած համարվել, դա-
րունը մօտ է և ժողովուրդը, որի
անմիջական, քաղցի, բազմա-
պէտքերին գուցէ մասամբ լը-
րում տրվեցաւ, գարնան գալուն
պէս պէտք է պատրաստ սերմ
ունենայ որ նորից ցանի իր ար-
տերը: Եթէ ոչ, սովը կարող է
դարձեալ կրկնվել և սաստկանալ
աշնանը:

Եւս ինչ խորհուրդ մենք կը
համարձակվէինք տալ սովատանջ-
ների դրութեան վրա խնամող
մասնաժողովներին. մինչև այժմ
ստացված փողերը շուտով գործ
դնել ալիւր դնելու և ժողովուրդին
այդ անհրաժեշտ պիտոյքը բա-
ժանելու վրա, իսկ այնուհետեւ
հաւաքվելու փողերի մի յայտնի
մասը, ինչքան իրանք հարկաւոր
կը համարեն, գործ դնեն ցորենը
առնելու վրա, որպէս զի կարողա-
նան Հայաստանի ժողովուրդին սերմ
բաժանել և այդպիսով միջոց տան

Հայաստանի երկրագործ ժողո-
ւորին գարնան գալուն պէս սեր-
մանել ցորենը իրանց հայրենիքի
արտերի վրա:

Իսկ դրա համար հարկաւոր է,
ի հարկէ, որ թէ Ռուսաստանի,
թէ Թիւրքիայի և թէ Պարս-
կաստանի հայ ժողովուրդի ունեւոր
դասը և ամբողջ ազգի բիշ շատ
միջոց ունեցող մարդիկ, որքան
հնար է, չը խնայէին իրանց
առատ նուէրները յոգուտ իրանց
սովատանջ եղբայրակիցներին:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՆԱՆԻՑ

7 փետրվարի

Նորերում մեզանում պատահեցաւ մի անցք,
մի հատ իրողութիւն, որ ամենի ուղարկութեան
առարկայ էր, որ երկար ժամանակի խոսակցութիւն-
ների նիւթ և զրոյցների առիթ էր եղած:

Երբ մի վաճառական յաջող ընթացք է տալիս

փորձում էին ցած խնայել բերդից ջուր բերելու
համար, բայց 20—30 քնացողներից շատ անգամ
մէկն էլ չէր վերադառնում:

— Հաց... ջուր... կրկին լսելի եղան օրհասական
հառաչանքները:

Այն կրկին և կրկին որոտաց թնդանօթի բռն-
բռնը և խլացրեց թշուառականների ձայները...

Այդ այն րօպէներէ մէկն էր, որ մարդը կորց-
նում է իր կարեկցութիւնը դէպի ընկեր. — կորց-
նում է, որովհետեւ ոչինչով օգնելու հնար չունի:
Այդ պատճառով, ոչ ոք ուղարկութիւն չէր դարձ-
նում սովախնայի վրա, ոչ ոք հոգ չէր տանում
ծարակներին: Ամեն մարդ, ընդհանուր խռովու-
թեան մէջ, սպասում էր մի վճառական րօպէի,
երբ թշնամին հեղուկ նման ներս կը թափվէր,
և սուրբ ձեռքով կը հանդիպէին իրանց պատուա-
ւոր վախճանին:

Միջնաբերդի ներսից, պատասպարված վերնա-
պարսպի ետեւում, շուրջանակի շարված էին պա-
հապան զինուորներ, և հրացանների համար բաց-
ված ծակերից դիտում էին թշնամու շարժումը:
Նրանք չէին համարձակվում գլուխները վեր
բարձրացնել պարսպից: Բերդի չորս կողմի
բարձրաւանդակներից անխնայ նետում էին, և
գնդակները շվիվալով սլանում էին աջ ու ձախ,
զարկելով պահապանների երեսին մի անախորժ
տաք օդ:

Այստեղից տեսնվում էր քաղաքը, որ ներկա-
յացնում էր մի ստակալ տեսարան: Նա լուսաւոր-
ված էր, կարծես, մի մեծ տոնախմբութեան հա-
մար: Լուսաւորված էին և քաղաքի շրջակայ բարձ-
րութիւնները, կատարվում էր մարդկային անգիթու-
թեան եղեռնական տօնը: Դա գաղանների մի
տօն էր, որ հանդիսացնում էին մոսուլմանները:
Տարտարոսը, միայն տարտարոսը, իր կրակի բոցե-
րով, իր չար օդիներով և իր բոլոր զարհուրանքով
կարող էր պարծնալ մի այսպիսի անգիթութեան
առջև: Այրվում էին հայրեր տները, իւրաքանչիւր
տան լուսամուտներից և դռներից հոսում էին,
կարծես, հրեղէն գետեր, և խառն ծխային թանձ-
րութեան հետ, բարձրանում էին օդի մէջ, սփռե-
լով դէպի ամեն կողմ կայծերի յորդ և առատ

Ի Ե Ն Թ Ը

ԱՐԿԱՄԵՐ ՎԵՐՋԻՆ ԹՈՒՍԹՈՒՐԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱՋՍԻՑ ԶԱՅԱՍՏԱՆՈՒՄ

«Երեւոյ մի քան գլուխ փող,
հարկեր խեղճներ հաւաքվեցան,
չը կարողացան դուրս հանել»:

«Մինչև խելացին կը մտածէ,
խնայել գետից անց կը կենայ»:

«Խնայելը — ուղիղ պատասխանն է
Ազգ. առաձնքը»:

Ա.

Բայազէդը պաշարված էր:

Թուրք, քիւրդ, բօյա, չուօ և աւելի քան քսան
հազար խառնիճաղանձ բաշխօղակներ, խառն
տաճկաց կանոնաւոր զորքերի հետ, շրջապատել
էին կիսաւեր քաղաքը: Նա ծխում էր կրակի մէջ,
որպէս մի ընդարձակ խարոյկի տարածութիւն:
Քրիստոնէայ հայրեր աները դատարկվել էին բնա-
կիչներից: Բարբարոսի սուրը և գերութիւնը սպա-
ռել էր նրանց: Հայերից մի փոքրիկ մաս միայն
ազատվել էր, կանխապէս փախչելով սահմանակից
Մազու քաղաքի կողմերը, որ պարսից հողի վրա
է գտնվում:

Բայազէդի միջնաբերդը դեռ մնացել էր անա-
ռիկ: Փոքրաթիւ ռուս զինուորներ, հայ և թուրք
կամաւոր միլիցիայի հետ, ամրացել էին այնտեղ, և
օրհասական յուսահատութեամբ, սպասում էին

մի սարսափիկ վախճանի: Բերդը չորեք կող-
մից սեղմված էր, կարծես, մի երկաթի օղակի
մէջ, որը հետզհետէ նեղնալով, կամենում էր մի-
անգամից խեղճել և մահացնել յուսաբեկ պաշար-
վածներին: Յարաբերութիւնը դրսի հետ բոլորովին
կտրված էր:

Պաշարումը պատահեց 1877 թվ. յունիսի 6-ին
և տեւեց ամբողջ 23 օր: Դա այն ժամանակն էր,
երբ ռուսաց յաջողակ սրի բախտը Հայաստանում
յանկարծ փոխվեցաւ: Տեղային մասնաւորանու-
թիւնը, որ սկզբում այժման յօժարութեամբ ըն-
դունեց ռուսաց տիրապետութիւնը, կրկին ա-
պստամբեցաւ և միացաւ Սմայլի փաշայի զօրքերի
հետ: Գնեհալ Տէր-Ղուկասովը, երևանեան զորա-
րաժնի հրամանատարը, այդ միջոցում գտնվում էր
Ջէյզեղանի և Գալի — Բաքայի մէջ, և իր փոքրաթիւ
գունդերով քաջութեամբ պատերազմում էր Մուխ-
թար փաշայի հինգ անգամ աւելի ուժի դէմ: Նա,
երկի, տեղեկութիւն չունէր, թէ ինչ էր պատա-
հել զժբախտ Բայազէդի հետ, որին թողել էր
բերդապահ (կոմանդանտ) Ռաֆայիլի պահպանու-
թեան ներքոյ:

Գիշեր էր:
Ախալուստի եղիւրդը դեռ նոր չքացել էր հօրի-
զօնից, թողնելով իր ետևից միայն խաւար, կար-
ծես, այդ խաւարը, այդ մութը աւելի անորժ լի-
նէր պաշարվածների համար: Կարծես, լուսինը,
տիեզերքի սրբելին, իր արծաթափայլ ճառագայթ-
ներով մասնում լինէր նրանց: Բայց գիշերի միջո-
թիւնը դարձեալ չը կարողացաւ արդեւ լինել
բարձրաւանդակի կատաղի յարձակմանը: Բայազէդի
միջնաբերդը, որպէս մի մուգ կէտ, անորոշ կեր-
պով նկարված էր բլուրների բարձրաւանդակի
վրա: Եւ ամեն կողմից կրակը մաղվում էր այդ
կէտի վրա, և ամեն կողմից թնդանօթների ռումբ-
ները ու հրազէնների գնդակները կարկառի նման
թափվում էին այնտեղ: Բերդը մահւում էր, որ-
պէս մի վիթխարի գաղաւ, որին ամեն կողմից
հարուածում էին: Նա դեռ ևս յամառութեամբ
մաքառում էր օրհասի և մահուան դէմ: Նա վրձ-
ուել էր մեռնել, բայց փառքով մեռնել: Մօտ
1000 ռուս զինուորներ, նոյն չափով հայ և

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Մամուլի տակից դուրս են եկել և վաճառվում են Կենտրոնական Իրավաճառանոցում հետևեալ գրքերը:

Table with 3 columns: Book title, Author, Price. Includes titles like 'Մանկական երգեր', 'Մարկոսեանի', 'Մարկոսեանի'.

Table with 3 columns: Book title, Author, Price. Includes titles like 'Հրատարակութիւն Չարմայր Մանրեանի', 'Փարոս Հայաստանի', 'Մարկոսեանի'.



30 Կօպէկ: Երեւանները կէսն են վճարում:

ՍԵՐՄԵՐ
ՊԱՐՏԵՂԻ ԲՈՒՄԻ ԵՆ ԵՄԱՐԻՆԻ ՍԵՐՄԵՐ, բոլորովին թափ տալով...

ՆԵՐՎԱՅ 1880 ԹԻՈՒՄ ԿԸ ՏՊԱԳՐՎԻ

„ԿԱՅԾԵՐ“

Վ.Է.Պ. ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ
Հեղինակու թիւն ՐԱՖԳԻ

Վէպը բաղկացած էր լինի երկու առանձին հատորներին իւրաքանչիւրը կը բովանդակէ մօտաւորապէս 400 տպագրված երեսներ: Եւ մէկ հատորի գինն է 1 ր. 50 Կ., իսկ միասին 3 ր. Մէկ հատորի համար առանձին ստորագրութիւն չէ ընդունվում:

Աշխարհահռչակ արտիստ և պատանշանների ասպետ Ն. Ա. Կողով պատիւ կուենայ զարձեւ մի մեծ սպիրիտիական ներկայացումն տալ Արծրունու թատրոնում:
2—2

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ
1. Երգչի կէսն ց քահանայ—Մանկական երգարան, երգեր և պարեր ընդունված է ներսիսեան և Գայանեան զարդաներում գինն է . . . ր. 20 Կ.
2. Մեծ ատուհան ց—Երգարան աղջկանց և աշակերտուհեաց Հայկական ուսումնարանաց . . . 1 ր. — Կ.
3. Բժիշկ Բ. Նաւասարդեան ց—Դիֆտերիա բողաղացաւ . . . ր. 25 Կ.
4. Բժիշկ Գ. Տէր-Գրիգորեան ց—Վարկիչ հիւանդութիւններ. (Մարկի, կարմուխ, սկարլաթին, բժական փոքր, անդադարձ տենդ, դիֆտերիա, ընդհատ տենդ, լուսնայ, դիֆտերիա, որովայնային և ժանտախտ):
Սոցա յատկութիւններն, ծագման և տարածման եղանակներն և նախապայտանդական միջոցներ:

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ եկող մարտի 1-ից կը սկսի փողոցներում թափառող և մետաղի կամ կաշու անուր չունեցող ՆԵՐՎԱՅ ղեկավարները: Իրանց շներին պահպանել ցանկացող ՏԵՐԵՐ նախազգուշացնում են այդ մասին:
1—3

ՄԻ ՀԱՅ ՕՐԻՈՐԻ, որ աւարտել է իւր ուսումն. Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ օրիորդաց ԳԻՄՆԱԶԻԱՆԵՐԻՑ միւնի մէջ, ցանկանում է վարժուհի հու պաշտօն ստանալ Կովկասի ՀԱՅՈՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐՈՒՄ: Պայմանները խնդրում ուղարկել հետեւեալ հասցեւ. Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, Նովայա տաւա, տ. 14 կ. 10 Խր. Իւ. Իոանու.
5—5

ՆԵՐՎԱՅԻՆ Հայոց ազգային Հոգեւոր ԴԷՊՈՅՈՒՄ, հոգաբարձական խորհրդարանի մէջ, գալով ՄԱՐՏ ԱՄՍՈՑ 12-ին, երկուշաբթի ժամը 7-ին, կը լինի ԱՃՈՐԴ (առանց կրկնաձուլի) կապալով տալու Թէթի սուրբ Գէորգայ ուխտատեղւոյ դաւթումը ՄԻ ԿՐՊԱԿԻՐԱ ՄԻ ՍԵՆՏԱԿՈՎ: Պայմանագրութիւն կարելի է կարգաւ հոգաբարձութեան զիւանաւորան մէջ ամեն օր բացի կիրակէից և տօներէր, առաւօտեան 10-ից ց 12 ժամ: Անդամ հոգաբարձութեան Ար. Նահապետեանց

Փետրվարի 12-ից ԲԱՅՎԵՑ Իշխան ՍՈՒՐԱՏՈՎԻ տանը ԿՈՆՏԻՏԵՐԻ և ՀԱՅԱՐԱՐԻ (карна) մազալին «ВАРШАВСКАЯ ПЕКАРНЯ» վերնագրով, որտեղ կը վաճառվին զանազան տեսակի խմոր և զէննեւր, նոյնպէս կը վաճառվին զանազան տեսակի կօնֆէտեւեր, ժան գնով: Թէ փքր և թէ մեծ քանակութեամբ ցանկացողները կարող են ստանալ ԻՄ ԳՈՐԾԻՐԱՆԻՑ: Օտար քաղաքացիք կարող են դիմել տեսակ հասցեով. СОЛОЖКИ, ВЪ ВАРШАВСКОЙ ПЕКАРНИ Мартыроу Ахназарову. Պատուէրները կը կատարվին ամենայն ճշգրտութեամբ գնողներին մեծ զիջումն անելով և փոստի ծախս մեզ վրա առնելով: Կօնֆէտեւերի գինը ֆունտ 40 Կօպէկից մինչեւ 1 ր.:
5—5